

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2022

## ՖԻԶԻԿԱ

ԹԵՍ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

### Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրքույկը չի սոուզվում: Սոուզվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթուղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

**1** Ո՞րն է արագության միավորը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 սմ/վ:
- 2) 1 կմ/ժ:
- 3) 1 մ/վ:
- 4) 1 կմ/վ:

**2** Ուղղագիծ շարժվող մարմնի արագությունը  $t$  ժամանակամիջոցում  $\vec{v}_1$ -ից հավասարաչափ աճում է մինչև  $\vec{v}_2$ -ը: Ո՞ր բանաձևով է որոշվում մարմնի միջին արագությունն այդ ընթացքում:

- 1)  $\vec{v}_{\text{միջ}} = \frac{\vec{v}_2 + \vec{v}_1}{2}$ :
- 2)  $\vec{v}_{\text{միջ}} = \frac{v_2^2 - v_1^2}{2}$ :
- 3)  $\vec{v}_{\text{միջ}} = \frac{\vec{v}_2 - \vec{v}_1}{2}$ :
- 4)  $\vec{v}_{\text{միջ}} = \frac{\vec{v}_2 + \vec{v}_1}{t}$ :

**3** Ուղղագիծ հավասարաչափ շարժվող վագոնի պատին կպած է մազնիս: Երկրի հետ կապված հաշվարկման համակարգը կարելի է համարել իներցիալ: Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

**Մազնիսի վրա ազդող ուժերի համագորը...**

- 1) և վագոնի, և Երկրի հետ կապված հաշվարկման համակարգում զրո է:
- 2) և վագոնի, և Երկրի հետ կապված հաշվարկման համակարգում զրո չէ:
- 3) զրո է վագոնի հետ կապված հաշվարկման համակարգում, իսկ Երկրի հետ կապված հաշվարկման համակարգում զրո չէ:
- 4) զրո չէ վագոնի հետ կապված հաշվարկման համակարգում, իսկ Երկրի հետ կապված հաշվարկման համակարգում զրո է:

**4** Ինչպե՞ս է ուղղված առաձգականության ուժը:

- 1) Ուղղված է դեֆորմացիա առաջացնող ուժին հակառակ:
- 2) Կունենա կամայական ուղղություն:
- 3) Ուղղահայաց է դեֆորմացիա առաջացնող ուժի ուղղությանը:
- 4) Ուղղված է դեֆորմացիա առաջացնող ուժի ուղղությամբ:

**5** Ինչպե՞ս կփոխվի մարմնի վրա ազդող ծանրության ուժը, եթե մարմինը տեղադրվի ուղղաձիգ դեպի վեր ուղղված արագացումով շարժվող վերելակում:

- 1) Կփոքրանա:
- 2) Կդառնա զրո:
- 3) Չի փոխվի:
- 4) Կմեծանա:

6


Երկրի մակերևույթից ի՞նչ բարձրությունում է արհեստական արբանյակի վրա Երկրի կողմից ազդող ձգողության ուժը փոքրանում 4 անգամ: Երկրի շառավիղը  $R$  է:

- 1)  $1,5R$
- 2)  $2R$
- 3)  $0,5R$
- 4)  $R$

7

Որքա՞ն է սկավառակի վրա ազդող  $\vec{F}_1$  և  $\vec{F}_2$  ուժերի մոմենտների գումարը սկավառակի կենտրոնով անցնող և նկարի հարթության ուղղահայաց առանցքի նկատմամբ: Սկավառակի շառավիղը  $R$  է:

- 1)  $RF_1$ :
- 2)  $RF_2$ :
- 3)  $R\sqrt{F_1^2 + F_2^2}$ :
- 4)  $R(F_1 + F_2)$ :



8

Որքա՞ն է հորիզոնի նկատմամբ անկյան տակ  $v_0$  սկզբնական արագությամբ նետված մարմնի արագությունը հետազծի ամենավերին՝  $h$  բարձրությամբ կետում: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1)  $v_0 + \sqrt{2gh}$ :
- 2)  $v_0 - \sqrt{2gh}$ :
- 3)  $\sqrt{v_0^2 + 2gh}$ :
- 4)  $\sqrt{v_0^2 - 2gh}$ :

9

Կիոխսվի՞ արդյոք տախտակի վրա դրված աղյուսի ճնշումը, եթե տախտակի մի ծայրն աստիճանաբար բարձրացնենք: Աղյուսը չի սահում տախտակի վրայով:

- 1) Չի կիոխսի:
- 2) Կմեծանա կամ կիոքրանա:
- 3) Կմեծանա:
- 4) Կիոքրանա:

10

Սկյուռը նստած է 3 մ բարձրությամբ ճյուղին: Որքա՞ն է նրա պոտենցիալ էներգիան Երկրի մակերևույթի նկատմամբ: Սկյուռի զանգվածը 2 կգ է:

- 1)  $30 \Omega$ :
- 2)  $60 \Omega$ :
- 3)  $2 \Omega$ :
- 4)  $6 \Omega$ :

11


Ինչի՞ց է կախված թիթեղի վրա ազդող մքնողրտային ճնշումը:

- 1) Օվկիանոսի մակարդակից ունեցած բարձրությունից:
- 2) Թիթեղի ձևից:
- 3) Թիթեղի մակերևույթի մակերեսից:
- 4) Հորիզոնի նկատմամբ կազմած անկյունից:

12

Նկարում պատկերված է տատանողական շարժում կատարող մարմնի կոռորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր պահերին է մարմնի արագությունը զրո:

- 1) 0, 1, 2, 3, 4, 5, 6 վ:
- 2) 2, 4, 6 վ:
- 3) 0, 2, 4, 6 վ:
- 4) 1, 3, 5 վ:



13

Ո՞ր արտահայտությամբ կարելի է հաշվել մարմնում պարունակվող մոլեկուլների թիվը, եթե հայտնի են մարմնի  $m$  զանգվածը,  $M$  մոլային զանգվածը,  $N_u$  Ավոգադրոյի հաստատունը:

- 1)  $\frac{mN_u}{M}$ :
- 2)  $\frac{N_u}{mM}$ :
- 3)  $\frac{m}{MN_u}$ :
- 4)  $\frac{MN_u}{m}$ :

14


Հաստատուն ջերմաստիճանում տվյալ զանգվածով իդեալական գազի ծավալը փոքրացնում են 2 անգամ: Ինչպես կփոխվի գազի ճնշումը:

- 1) Կմեծանա 4 անգամ:
- 2) Կփոքրանա 4 անգամ:
- 3) Կմեծանա 2 անգամ:
- 4) Կփոքրանա 2 անգամ:

15

Հաստատուն զանգվածով իդեալական գազն սկզբում իզոթերմ ընդարձակվում է, ապա՝ իզոբար տաքացփում: Ո՞ր գործիքն է ներկայացնում այդ պրոցեսները:

- 1)  $q$ :
- 2)  $\eta$ :
- 3)  $w$ :
- 4)  $p$ :



16

Ո՞ր արտահայտությամբ կարելի է հաշվել իդեալական գազի խտությունը ( $p$ -ն գազի ճնշումն է,  $T$ -ն՝ բացարձակ ջերմաստիճանը,  $M$ -ը՝ մոլային զանգվածը,  $R$ -ը՝ ունիվերսալ գազային հաստատունը):

- 1)  $\frac{RT}{pM}$ :
- 2)  $\frac{pRT}{M}$ :
- 3)  $\frac{pR}{MT}$ :
- 4)  $\frac{pM}{RT}$ :

17

Սառույցը հալվելիս «սառույց-ջուր» համակարգի ջերմաստիճանը չի փոխվում: Այդ դեպքում ինչպե՞ս է փոխվում նշված համակարգի ներքին էներգիան:

- 1) Փոքրանում է:
- 2) Հնարավոր է մեծանա կամ փոքրանա:
- 3) Չի փոխվում:
- 4) Մեծանում է:

18

Ո՞ր գոլորշին է կոչվում հազեցած:

- 1) Ցածր ջերմաստիճանի գոլորշին:
- 2) Գոլորշին, որն իր հեղուկի հետ շարժուն հավասարակշռության մեջ է:
- 3) Բաց անորում հեղուկի մակերևույթին առաջացած գոլորշին:
- 4) Բավական մեծ խտությամբ գոլորշին:

19

Յերեկո լճի մակերևույթի բարակ սառույցը հալվեց: Հալվելոց սառույցը մքնոլորտից ջերմաքանակ վերցրե՞ց, թե՞ տվեց:

- 1) Որքան վերցրեց մքնոլորտից, այնքան էլ տվեց ջրին:
- 2) Որքան վերցրեց ջրից, այնքան էլ տվեց մքնոլորտին:
- 3) Տվեց:
- 4) Վերցրեց:

20

Ինչո՞ւ են մետաղները հաճախ դրսորում իզոտրոպ հատկություններ:

- 1) Ամորֆ մարմիններ են:
- 2) Նրան մեջ կան ազատ էլեկտրոններ:
- 3) Սիարյուրեղներ են:
- 4) Բազմաբյուրեղներ են:

21

Ի՞նչ լիցքեր են ձեռք բերում միմյանց հետ շփման հետևանքով էլեկտրականացած երկու մարմինները:

- 1) Լիցքերը նույնն են և նշանով, և մոդուլով:
- 2) Լիցքերը տարբեր են և նշանով, և մոդուլով:
- 3) նշանով տարբեր, մոդուլով՝ հավասար:
- 4) նույն նշանի, մոդուլով՝ տարբեր:

22

Ի՞նչ միավորով է չափվում էլեկտրական դաշտի պոտենցիալը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 Վ/մ:
- 2) 1 Ն/Կլ :
- 3) 1 Վ:
- 4) 1 Կլ/Ն:

23

Ինչպե՞ս կփոխվի կոնդենսատորի էներգիան, եթե նրա լիցքը մեծացնենք 2 անգամ:

- 1) Կփոքրանա 4 անգամ:
- 2) Կմեծանա 4 անգամ:
- 3) Կփոքրանա 2 անգամ:
- 4) Կմեծանա 2 անգամ:

24

Ինչպե՞ս կփոխվի զլանաձև համասեռ հաղորդչի ոլիմադրությունը, եթե նրա լայնական հատույթի մակերեսը մեծացնենք 2 անգամ:

- 1) Կմեծանա 4 անգամ:
- 2) Կփոքրանա 4 անգամ:
- 3) Կմեծանա 2 անգամ:
- 4) Կփոքրանա 2 անգամ:


25 Նկարում պատկերված շղթայի ծայրերին կիրառված է  $U_0$  լարում: Որքա՞ն է  $2R$  դիմադրության ծայրերին լարման անկումը:

1)  $\frac{U_0}{3}$ :

2)  $\frac{2U_0}{3}$ :

3)  $3U_0$ :

4)  $U_0$ :



26 Ինչպե՞ս կփոխվի միավոր ժամանակում հաղորդչում անջատված ջերմաքանակը, եթե, անփոփոխ պահելով լարումը, նրա դիմադրությունը մեծացնենք 3 անգամ:

- 1) Կմեծանա 9 անգամ:
- 2) Կփոքրանա 9 անգամ:
- 3) Կմեծանա 3 անգամ:
- 4) Կփոքրանա 3 անգամ:

27  $\varepsilon$  ԷլԾՈՒ և  $r$  ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրին միացված է  $R$  արտաքին դիմադրություն: Ի՞նչ է արտահայտում  $\varepsilon^2 R / (R + r)^2$  մեծությունը:

- 1) Շղթայում անջատված լրիվ հզորությունը:
- 2) Լարումը հոսանքի աղբյուրի սեղմակներում:
- 3) Հոսանքի ուժը շղթայում:
- 4) Շղթայի արտաքին տեղամասում անջատված հզորությունը:

28 Ինչպե՞ս են ուղղված խոռոչների և ազատ էլեկտրոնների ուղղորդված շարժման արագությունները էլեկտրական դաշտում:

- 1) Երկու դեպքում էլ՝ էլեկտրական դաշտի լարվածության ուղղությամբ:
- 2) Երկու դեպքում էլ՝ էլեկտրական դաշտի լարվածությանը հակառակ ուղղությամբ:
- 3) Խոռոչներին՝ էլեկտրական դաշտի լարվածության ուղղությամբ, էլեկտրոններին՝ լարվածությանը հակառակ:
- 4) Էլեկտրոններին՝ էլեկտրական դաշտի լարվածության ուղղությամբ, խոռոչներին՝ լարվածությանը հակառակ:

29

Էլեկտրոլիզի ժամանակ 4 վ ընթացքում դրական իոնները դեպի կաթոդ են տեղափոխում 2 Կլ դրական լիցք, բացասական իոններն ել դեպի անոդ են տեղափոխում նույն մեծության բացասական լիցք: Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայում:

- 1) 1 Ա:
- 2) 2 Ա:
- 3) 0:
- 4) 0,5 Ա:

30

$m$  զանգվածով և  $q$  լիցքով մասնիկը  $B$  ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում կատարում է հավասարաչափ շրջանագծային շարժում:  $\Omega^*$  արտահայտությամբ է որոշվում մասնիկի անկյունային արագությունը:

- 1)  $qmB$ :
- 2)  $\frac{qB}{m}$ :
- 3)  $\frac{m}{qB}$ :
- 4)  $\frac{qm}{B}$ :

31

Ինչպե՞ս է կոչվում այն ֆիզիկական մեծությունը, որը հավասար է ինդուկցիայի  $\vec{B}$  վեկտորի մոդուլի և այդ դաշտում կոնտորի մակերևույթի  $S$  մակերեսի և ինդուկցիայի վեկտորի ու մակերևույթի նորմալի կազմած անկյան կոսինոսի արտադրյալին:

- 1) Մագնիսական ինդուկցիա:
- 2) Մագնիսական դաշտի էներգիա:
- 3) Ինդուկտիվություն:
- 4) Մագնիսական հոսք:

32

$\Omega^*$  բանաձևով է որոշվում ազատ էլեկտրամագնիսական տատանումների հաճախությունը  $C$  էլեկտրառուսակությամբ կոնդենսատորից և  $L$  ինդուկտիվությամբ կոճից կազմված տատանողական կոնտուրում:

- 1)  $2\pi\sqrt{LC}$ :
- 2)  $\frac{1}{2\pi\sqrt{LC}}$ :
- 3)  $\sqrt{LC}$ :
- 4)  $\frac{1}{\sqrt{LC}}$ :

**33** Մարմնի և հարք հայելում նրա պատկերի միջև հեռավորությունը 50 սմ է: Որքա՞ն կլինի այդ հեռավորությունը, եթե մարմինը հայելուց հեռացնենք 10 սմ-ով:

- 1) 60 սմ:
- 2) 70 սմ:
- 3) 40 սմ:
- 4) 50 սմ:

**34** Չուզահեռ ճառագայթներն անցնելով երկու հավաքող բարակ ոսպնյակներով, մնում են իրար զուզահեռ: Ինչպե՞ս են դասավորված այդ ոսպնյակները:

- 1) Ոսպնյակների միջև հեռավորությունը շատ մեծ է կիզակետային հեռավորություն-ների գումարից:
- 2) Հնարավոր է միայն այն դեպքում, եթե ոսպնյակների կիզակետային հեռավորությունները հավասար են:
- 3) Կիավ հպված են միմյանց:
- 4) Առաջին ոսպնյալի հետևի կիզակետային հարթությունը համընկնում է երկրորդ ոսպնյակի առջևի կիզակետային հարթությանը:

**35** Ո՞ր գույնի լույսի ճառագայթն է օդում ապակե հատվածակողմով անցնելիս բոլորից շատ շեղվում:

- 1) Մանուշակագույն:
- 2) Կարմիր:
- 3) Կանաչ:
- 4) Կապույտ:

**36** Ինչո՞ւ դասասենյակը լուսավորող լամպի լույսից ինտերֆերենց չի դիտվում:

- 1) Լամպի առաքած լուսային ալիքները կոհերենտ չեն:
- 2) Լամպի ապակին ցրում է լույսը:
- 3) Լամպի հզորությունը բավարար չէ:
- 4) Լամպի հեռավորությունը մեծ է:

**37** Եթե կեկտրամագնիսական ալիքի հաճախությունը փոքրանա երկու անգամ, ապա ինչպե՞ս կփոխվի ճառագայթման ֆոտոնի էներգիան:

- 1) Կմեծանա 4 անգամ:
- 2) Կփոքրանա 4 անգամ:
- 3) Կմեծանա 2 անգամ:
- 4) Կփոքրանա 2 անգամ:

38

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:


Համաձայն Ուեզերֆորդի՝ ատոմի միջուկում կենտրոնացված են...

- 1) ատոմի զանգվածի չնշին մասը և ամբողջ դրական լիցքը:
- 2) ատոմի զանգվածի չնշին մասը և ամբողջ բացասական լիցքը:
- 3) ատոմի գրեթե ամբողջ զանգվածը և ամբողջ դրական լիցքը:
- 4) ատոմի ամբողջ զանգվածը և բացասական լիցքը:

39

Նկարում պատկերված է ատոմի էներգիական մակարդակների դիագրամը: Ո՞ր անցման դեպքում է ատոմի ճառագայթած ալիքի հաճախությունն առավելագույնը:

- 1)  $E_1 \rightarrow E_3$ :
- 2)  $E_4 \rightarrow E_1$ :
- 3)  $E_2 \rightarrow E_3$ :
- 4)  $E_4 \rightarrow E_3$ :



40

Որքա՞ն է չեզոք ատոմում էլեկտրոնների թիվը, եթե ատոմի միջուկը պարունակում է Z պրոտոն և N նեյտրոն:

- 1) 0:
- 2)  $Z$ :
- 3)  $Z + N$ :
- 4)  $Z - N$ :

41

Որքանո՞վ է փոքրանում ջրածնի ատոմի էներգիան  $4,8 \cdot 10^{-7}$  մ ալիքի երկարությամբ ֆոտոն ճառագայթելիս: Պլանկի հաստատումը՝  $6,6 \cdot 10^{-34}$  Ջ·վ է, լույսի արագությունը վակուումում՝  $3 \cdot 10^8$  մ/վ: Պատասխանը բազմապատկել  $10^{22}$ -ով:

42

Շղթայում իրար զուգահեռ միացված են լամպը և ռեստատը: Հոսանքի ուժը լամպում  $0,5 \text{ A}$  է, իսկ ռեստատում՝  $2,5 \text{ A}$ : Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայի չճուղավորված մասում:

43

$27^{\circ}\text{C}$  ջերմաստիճանում  $0,6 \cdot 10^{-2}$  կգ զանգվածով իդեալական գազի ծավալը  $4 \cdot 10^{-3} \text{ m}^3$  է: Ի՞նչ խտություն կունենա զազը, եթե այն իզոբար տաքացվի մինչև  $177^{\circ}\text{C}$ :

44

Ուղղագիծ հավասարաչափ արագացող շարժում կատարող մարմնի արագությունը որոշվում է  $v = 3 + 2t$  քանաձևով, որտեղ մեծություններն արտահայտված են ՄՀ-ի համապատասխան միավորներով: Որքա՞ն է մարմնի անցած ճանապարհը առաջին  $4 \text{ s}$ -ում:

(45-46)  $5 \cdot 10^{-7}$  մ ալիքի երկարությամբ մեներանգ լույսն ուղղահայաց ընկնում է յուրաքանչյուր միլիմետրում 500 նորագիծ պարունակող ցանցի վրա:

45 Որքա՞ն է դիֆրակտային ցանցի հաստատունը: Պատասխանը բազմապատկեք  $10^6$ -ով:

46 Քանի՞ մաքսիմում է պարունակում դիֆրակտային սպեկտրը:

(47-48) Լույսի ամենափոքր հաճախությունը, որի դեպքում մետաղի ելեկտրոն է պոկվում,  
 $6 \cdot 10^{14}$  Հց է: Պլանկի հաստատունը  $6,6 \cdot 10^{-34}$  ՋՎ է, ելեկտրոնի լիցքի մոդուլ՝  
 $1,6 \cdot 10^{-19}$  Կլ:

47 Որքա՞ն է մետաղի ելքի աշխատանքը: Պատասխանը բազմապատկեք  $10^{21}$ -ով:

48

Ի՞նչ առավելագույն հաճախության դեպքում մետաղից պոկված էլեկտրոնները լրիվ կարգելակվեն  $3,3 \times 10^{-14}$ - ով:

(49-50) 1000  $\Omega/\text{կգ}\cdot\text{Կ}$  տեսակարար ջերմումակություն ունեցող  $0,5 \text{ կգ}$  զանգվածով գազը  $10 \text{ Կ-ով}$  տաքացնելիս նրա ներքին էներգիան աճեց  $1000 \Omega$ -ով:

49

Ի՞նչ ջերմաքանակ է հաղորդվել գազին:

50

Որքա՞ն է զազի կատարած աշխատանքը:

(51-52)  $16 \cdot 10^{-6}$  Ֆ ունակությամբ լիցքավորված կոնդենսատորը միացրին  $9 \cdot 10^{-2}$  Հն ինդուկտիվությամբ կոճին:

51 Որքա՞ն է տատանողական կոնտուրում առաջացած ազատ էլեկտրամագնիսական տատանումների պարբերությունը: Պատասխանը բազմապատկեք  $10^6$ -ով:

52 Կոճին միացնելուց հետո, նվազագույնը որքա՞ն ժամանակում կոնդենսատորի լիցքը կփոքրանա 2 անգամ: Պատասխանը բազմապատկեք  $10^6$ -ով:

(53-54) Մարդը 4 կգ զանգված ունեցող մարմինն ուղղաձիգ բարձրացնում է 3 մ/վ<sup>2</sup> հաստատուն արագացմամբ: Օղի դիմադրությունն աճտեսել: Ազատ անկման արագացումը 10 մ/վ<sup>2</sup> է:

53 Որքա՞ն է մարմնի վրա մարդու գործադրած ուժը:

54

Որքա՞ն աշխատանք է կատարում մարդը մարմինը 1,5 մ բարձրացնելիս:

(55-57) 50 կգ զանգվածով բեռը 5 մ երկարությամբ և 3 մ բարձրությամբ թեք հարթությամբ հավասարաչափ բարձրացնում են՝ այն քաշելով թեք հարթության երկայնքով ուղղված պարանով: Ըստ անունու գործակիցը բեռի և թեք հարթության միջև 0,3 է: Ազատ անկման արագացումը  $10 \text{ m/s}^2$  է:

55

Որքա՞ն է թեք հարթության վրա ազդող բեռի ճնշման ուժը:

56

Որքա՞ն է բեռի վրա ազդող սահքի շիման ուժը:

57

Որքա՞ն է պարանի լարման ուժը բեռը հավասարաչափ վեր քաշելիս:

(58-60) Քարունետրական խողովակում սնդիկի մակարդակը  $0,04 \text{ մ}\cdot\text{ով}$  բարձր է քաժակում սնդիկի մակարդակից: Խողովակում օդի սյան բարձրությունը սնդիկից վեր  $0,19 \text{ մ}$  է: Մընոլորտային ճնշումը հավասար է  $760 \text{ մմ սնդ. սյան}$ : Օդի ջերմաստիճանը հաստատում է: Ազատ անկման արագացումը  $10 \text{ մ}/\text{s}^2$  է:

58

Որքա՞նով կփոխվի օդի ճնշումը խողովակում, եթե այն իջեցվի այնքան, որ սնդիկի մակարդակները խողովակում և քաժակում հավասարվեն: Սնդիկի խտությունն ընդունել  $13,6 \cdot 10^3 \text{ կգ}/\text{մ}^3$ :


59

Որքա՞ն է օդի սյան բարձրությունը խողովակում, եթե այն իջեցրել են այնքան, որ սնդիկի մակարդակները խողովակում և քաժակում հավասարվեն: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

60

Որքա՞ն պետք է իջեցրել խողովակը, որպեսզի սնդիկի մակարդակները խողովակում և բաժակում հավասարվեն: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

- (61-64) Թելին ամրացված և կերոսինի մեջ սուզված  $15,6$  մգ զանգվածով A պողպատե գնդիկի լիցքը  $7 \cdot 10^{-9}$  Կլ է: Գնդիկին ներքեց մոտեցնում են  $9 \cdot 10^{-9}$  մ<sup>3</sup> ծավալով և  $-2 \cdot 10^{-9}$  Կլ լիցքով B պողպատե փոշեհատիկն այնքան, որ այն հավասարակշռվում է (նկ. 1): Կերոսինի խտությունը  $800$  կգ/մ<sup>3</sup> է, պողպատինը՝  $7800$  կգ/մ<sup>3</sup>, կերոսինի դիէլեկտրական քաշանցելիությունը՝  $2$ : Կուլոնի օրենքում համեմատականության գործակիցն ընդունել՝  $k=9 \cdot 10^9$  Ն·մ<sup>2</sup>/Կլ<sup>2</sup>, իսկ ազատ անկման արագացումը՝  $10$  մ/վ<sup>2</sup>:



Նկ. 1

61

Որքա՞ն է փոշեհատիկի վրա ազդող արքիմեդյան ուժը: Պատասխանը բազմապատկեր  $10^6$ -ով:

62

Գնդիկի կենտրոնից ի՞նչ հեռավորության վրա է գտնվում փոշեհատիկը: Պատասխանը բազմապատկեր  $10^2$ -ով:

63

Որքա՞ն է փոշեհատիկի և գնդիկի էլեկտրական ձգողության ուժը: Պատասխանը բազմապատկեք  $10^5$ -ով:

64

Որքա՞ն է թելի լարման ուժը: Պատասխանը բազմապատկեք  $10^5$ -ով:

(65-68) Զապանակին ամրացված լուսավորված գնդիկը 2 Հց հաճախորդյանք տատանվում է ուղղաձիգով: Գնդիկի տատանումները բարակ ոսպնյակի միջոցով արտապատկերվում է ոսպնյակի զիսավոր օպտիկական առանցքին ուղղահայաց, ուղղաձիգ էկրանին: Գնդիկի առավելագույն արագությունը  $0,628$  մ/վ է, իսկ գնդիկի և էկրանի հեռավորությունը՝  $90$  սմ: Էկրանի վրա գնդիկի պատկերի տատանումների լայնույթը՝  $10$  սմ է:

65

Որքա՞ն է գնդիկի տատանումների լայնույթը: Պատասխանը բազմապատկել  $10^2$ -ով:

**66** Որքա՞ն է ոսպնյակի խոշորացումը:

**67** Որքա՞ն է գնդիկի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկել 10-ով:

**68** Որքա՞ն է ոսպնյակի կիզակետային հեռավորությունը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

69

### Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

- Կոնվերտ նյութի համար ֆոտոէֆեկտը դիտվում է լույսի որոշակի հաճախությունից փոքր հաճախությունների դեպքում:
- Յուրաքանչյուր կլանված ֆոտոն մետաղից պոկում է մեկ էլեկտրոն:
- Զերմային ճառագայթումը տեղի ունի մարմնի միայն շատ բարձր ջերմաստիճանում:
- Ֆոտոնը լույսի քվանտն է, որը կարող է արձակել և կլանել ատոմը:
- Ֆոտոնի էներգիան որոշվում է  $E=h\nu$  բանաձևով, որտեղ  $h$ -ը Պլանկի հաստատումն է,  $\nu$ -ն լույսի ալիքի հաճախությունը:
- Հազեցման ֆոտոհոսանքի ուժն ուղիղ համեմատական է մետաղի վրա ընկնող լույսի հաճախությանը:

70

### Հաստատուն մագնիսը քևեռներից մեկի ուղղությամբ մտնում է $L$ ինդուկտիվությամբ կոճի մեջ: Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

- $1 \text{ Sl} \text{m}^2 = 1 \text{ Vs}$ :
- $N$  գալար ունեցող կոճում մակածված  $E_{\text{լ}C\Omega}-ն՝ \varepsilon = -N \frac{\Delta \Phi}{\Delta t}$ , որտեղ  $\Delta \Phi$ -ն կոճում մագնիսական դաշտի փոփոխությունն է  $\Delta t$  ժամանակում:
- Մագնիսի հավասարաչափ շարժման դեպքում կոճում  $E_{\text{լ}C\Omega}$  չի առաջանա:
- Մագնիսի արագացմամբ շարժման դեպքում կոճում կմակածվի  $E_{\text{լ}C\Omega}$ :
- Կոճի մեջ մտցված հաստատուն մագնիսը իր առանցքի շուրջը պտտելիս, կոճում կմակածվի  $E_{\text{լ}C\Omega}$ :
- Մագնիսական հոսքի միավորը  $Uz$ -ում  $1 \text{ Sl}$  է: